

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 06.04.2021թ. թիվ 168 նիստից**

Նիստին մասնակցել են խորհրդի 24 անդամներից 18-ը:

Օրակարգ.

1. Ասպիրանտ՝ Անժելա Ղալամդարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում:
2. Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Վլադիմիրի Աթանեսյանի կողմից ներկայացված դիմումը:
3. 2020 թվականի Արցախյան պատերազմի և Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող հանդիսացող մասնակիցների /այդ թվում զոհված/ համար ֆակուլտետային ուսանողական խորհրդի կողմից ներկայացված՝ հիշատակի և աջակցության առաջարկությունների քննարկում:

**Լսեցին 1.** Ասպիրանտ՝ Անժելա Ղալամդարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում:

**Ելույթ ունեցան.** Հ.Վերմիշյան, Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

**Որոշեցին.** Հաստատել ասպիրանտ՝ Անժելա Ղալամդարյանի ատենախոսության թեման՝ «Սոցիալական ներառման հիմնախնդիրները ՀՀ խոշորացված համայնքներում», և գիտական ղեկավար նշանակել ս.գ.թ. դոցենտ Հարություն Վերմիշյանին:

**Լսեցին 2.** Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին քաղաքական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր Արթուր Վլադիմիրի Աթանեսյանի կողմից ներկայացված դիմումը:

**Ելույթ ունեցան՝** Ա. Մկրտչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Ռ. Սահակյանը, Ա.Կ. Սահակյանը, Հ. Վերմիշյանը, Մ. Անտոնյանը: Նրանք քննարկեցին Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի՝ նախորդ տարիների ընթացքում Ա.Վ. Աթանեսյանի ղեկավարությամբ ամբիոնի իրականացված աշխատանքները, նվաճումները, առկա հիմնախնդիրները, ամբիոնի և դրանով իսկ՝ ֆակուլտետի զարգացման գործում Ա. Վ. Աթանեսյանի դերակատարումը: Հիմք ընդունվեցին Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունները:

Առաջարկվեց ամբիոնի վարիչի ընտրությունների կազմակերպման համար ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ս. Մխիթարյան /Հաշվիչ հանձնաժողովի նախագահ/, Ն. Մելքոնյան, Է. Արիստակեսյան:

Տեղի ունեցավ փակ /գաղտնի/ քվեարկություն:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս. Մխիթարյանը հրապարակեց քվեարկության հետևյալ արդյունքները. նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 18-ը, բաժանվել է 18 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 18 քվեաթերթիկ՝ Ա. Վ. Աթանեսյանի թեկնածության քվեարկության համար:

Քվեարկության արդյունքները.

Ա. Վ. Աթանեսյանի թեկնածության համար.

18՝ կողմ, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին նշված արդյունքները:

**Որոշեցին.** քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Վլադիմիրի Աթանեսյանին ընտրել ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ:

**Լսեցին 3:** 2020 թվականի Արցախյան պատերազմի և Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող հանդիսացող մասնակիցների /այդ թվում զոհված/ համար ֆակուլտետային ուսանողական խորհրդի կողմից ներկայացված՝ հիշատակի և աջակցության առաջարկությունների քննարկում:

**Ելույթ ունեցան.** Ա. Մկրտիչյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը, Ն. Մելքոնյանը:

**Որոշեցին:** Ֆակուլտետի լսարաններից մեկում, պատերազմին մասնակցած ֆակուլտետի ուսանողներին նվիրված հուշատախտակի պատրաստում և տեղադրում: Հուշատախտակում ներկայացված կլինեն Սոցիոլոգիայի ֆակուլտետի՝ Արցախյան պատերազմին (1991թ. - մինչ այսօր) ուսանողների մասին հակիրճ նկարագրությունը, լուսանկարները:

Նիստի նախագահող՝

Ա. Ե. Մկրտիչյան

Նիստի քարտուղար՝

Ա. Ռ. Սահակյան